


THE DICKRIS PUBLISHING CO. 628 Third Avenue, NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆՆԱԿՆԵՐԸ ԲԱԾ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒՆ:

ԱՂՊԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՓԱՂԱՓԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 20 ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱԲԱԹ, ՄԱՐՏ 26, 1898 ԳԻՆ 3 ՍԷՆԹ

Գ Ա Ղ Ա Փ Ա Կ Ա Ն

Օրուայ ամենակարևոր խնդիրը Լորտ Սալիսպլերի հիւանդութիւնն է. Հանրածանօթ Բրիտանական նախարարացեալը անկարող է առ այժմ իւր պաշտօնը վարելու. Ժանր ինֆլուէնցիան մը կը տառապի, և առողջութիւնը գրեթէ ամբողջովին խանգարուած է: Անցեալ շաբաթ ստիպուեցաւ հարաւային Գաղղիայ մեկնել, Միջերկրականի եզերքներու քաղցր և պայծառ երկիրն քէն առողջութիւն մուրալու համար. սակայն բարեխառն օդերու սիրտն ալ երբեմն կարծր կ'ըլլայ, և եթէ նիսի և Ռէվիտի կըլինան այնչափ բարեսրտութիւն ցոյց տայ Լորտին, որքան ինքն ցոյց տուաւ շարքուող Հայերուն, կը գուշակուի թէ հոշակաւոր Պէռլինի դաշնագրութեան հայրը և կնքահայրը պիտի ըստիպուի գործէ բոլորովին քաշուել, և այսպէս «երկաթագոյն եղէգը» հիւսիսային Ռուսական փշած հովին տակ պիտի կտորի:

Խնդիր է թէ ո՞վ պիտի յաջորդէ իրեն: Առ այժմ Արթըր Պալֆըրը կը վարէ արտաքին գործոց նախարարութիւնը, սակայն այս դիւանագէտը այդ ճիւղին մէջ բաւական փորձառութիւն չունի, և բաց աստի արդէն իւր վրայ կը ծանրանան Հանգզ օֆ Բոմբայի առաջնորդելու և գանձային նախարարութեան պաշտօնները: Ոմանք կը զրուցեն թէ «գալիք մարդը» պիտի ըլլայ արդի գաղթականական նախարար Չամպրէյնը, իսկ ուրիշներ ալ Եղիպտոսի Անգլիոյ ներկայացուցիչի, Լորտ Բրոմլըի անունը նետած են հրապարակ. բայց երբ նկատենք թէ ներկայ Երևանի նիսթ կառավարութիւնը մեծ մասամբ կը բաղկանայ Լիպըրըլ Երևանի ինքնիշխանութիւնէ, որոնց պարագլուխները են Տօլընշայրի Դուքըրը և Չամպրէյնը, այն ատեն հաւանական պիտի նկատենք այս վերջինին արտաքին գործոց նախարար, իսկ Դուքըրը ալ նախարարապետ ըլլալը, հակառակ պարագային՝ Լիպըրըլ Երևանի ինքնիշխանութիւնը պիտի գծարն և զատուին Պաշտպանականներէն:

Լորտ Բրոմլըր վերջին աստիճանի Պաշտպանական մ'է, և Սօլըսպլերի քաղաքականութեան համակարծիք, մինչդեռ Չամպրէյնը զատ գաղափարներ ու քաղաքականութիւն ունի, և կը յուսացուի որ աւելի զօրաւոր ընթացք մը բռնէ:

Փալ Մալ Կազէթը կը գրէ թէ կըլատուածի վիճակը երթալով կը ծանրանայ. իւր երեսի ցաւը այնչափ սաստիկ է, որ իւր ամբողջ առողջութիւնը խանգարած է: Չը յուսացուիր որ այս հիւանդութիւնէն կը բժշկուի:

Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ Սուլթանը դիմած է Չարին խնդրելով որ Ռուս և Թրքական պատերազմի տուգանքէ թերահաշիւ Ռուսիոյ պահանջած 750,000 ռուբլին առ այժմ չը պահանջուի, և Յունաստանէն գանձուե-

լիք տուգանքը Թուրքիոյ մնայ: Չարը ընդունած է Սուլթանի խնդրը. կը խսուի թէ Սուլթանն ալ Չարի առաջարկը պիտի ընդունի՝ Յունաստանի ձորձ իշխանը կրէտէի կառավարիչ անունանելով:

Ռուսական հռչակաւոր ծովակալ և Չարին թիկնապահ Փօփօֆ, որ կըլորը զրահաւորներու հնարիչն էր, անցեալներս մեռած է:

Գերմանիոյ մէջ Մարտ 18ին, 48ի յեղափոխութեան 50րդ տարեդարձը կատարուեցաւ: Պէրլինի Արմատականներու և Ընկերավարականներու կողմէն մեծ հանգէսներ տեղի ունեցան: Ժողովուրդը կ'ուզէր մեծ ցոյց մը ընել Ֆրէյտրիխսէյն գերեզմանատան մէջ, ուր տեղ թաղուած են յեղափոխութեան մարտիրոսները, սակայն կառավարութիւնը չը թողարտէր այս ցոյցը. միայն ամբողջ խողով կերպով այցելեց զառտութեան հերոսներու գերեզմանները:

Գաղղիան ալ ոտքի ելած է և կը խնդրէ իւր բաժինը Չինաստանէ: Հարաւային Չինաստանի գաւառներուն մէջ կը պահանջէ այն մենաշնորհումները և իրաւունքները, որոնք տարուեցան Գերմանիոյ Բիո Չուի, և Ռուսիոյ Փօրթ Արթրին և Բորէաի մէջ: Հանաթօ 8 օրուայ պայմանագրով տրուած է Չինաստանին այս պահանջները կատարելու համար: Չինաստանը ժամանակի երկարաձգում խնդրեց, և միւս կողմէն իւր Գերմանիոյ դեսպանը զրկեց Ս. Փէթըրպուրի, որպէս զի համոզէ Չարը որ Գաղղիան իւր պահանջները դադարեցնէ:

Միացեալ Նահանգաց և Սպանիոյ մէջ եղած դժուարութիւնները այս վերջին օրերս աւելի խաղաղական կերպարանք ստացած են. պատերազմի վախը գրեթէ փարատած է, և երկու կողմէն, քիչ մը բարի կամեցողութեամբ, կը յուսացուի որ պատերազմի ամպերը բոլորովին կանցնին:

Կը նախագուշակուի թէ Հավանա գացած ընկիչ յանձնարումը իւր տեղեկագրին մէջ պիտի ըսէ թէ Սպանիական կառավարութիւնը Մէյնի արկածին մէջ մեղսակից չէ: Այն ժամանակ խնդիր պիտի ըլլայ թէ մարտնամար պայթեցուցուած է. և եթէ այս հաստատուի, կարելի պիտի ըլլայ յանցաւոր անհատը գտնել. և եթէ անհատը գտնուի ալ, Սպանիական կառավարութիւնը պատասխանատու է սոսկ անձի մը ըրածին համար: Միջազգային օրէնագէտները բացասական պատասխան կուտան. իմիջի այլոց ԵՄ Բօլէնի միջազգային օրէնքներու գաւառու և Լօնտոնի նախկին Ամերիկեան դեսպան Ֆէլիքսի պէս հեղինակութիւնները Լուպանիան պատասխանատու չեն նկատուիր:

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Փետր. 22. Էլիաս էֆ. Չայեան, Դրան այս ծերունի և հաւատարիմ Հայ պաշտանեայն, որ բազում տարիներէ իվեր Արտաքին գործոց օգնական նախարարներուն օգնականի պաշտօնը վարած է, և վերջին տարիներս ալ Պետական խորհուրդին մէջ աթոռ մ'ունի, իւր Օսմ. Կառավարութեան մատուցած բազմաթիւ ծառայութիւններուն վրայ հատ մըն ալ աւելցուց երկու շաբաթ առաջ:

Պալատական կուսակցութիւն մը համոզեց Սուլթանը թէ Լօնտոնի և Ժնեւի վի թօմիթէները արդէն քայքայուելու վիճակին մօտ են. ներքին շատ մը կռիւններու պատճառով՝ Յեղ. կուսակցութիւններն անգործունէութեան մատնուած են, ուստի ճիշդ պատեհ առիթն է որ Պալատի կողմէն յատուկ Հայ պատգամաւոր մը զրկուի թօմիթէներու գլխաւորներուն ընկու իրենց թէ, կրկին կազմակերպուելու և գործելու պէտքը ընաւ չի կայ: Սուլթանը իւր կէս աստուածական և ամբողջ խալիֆայական Պատիւին վրայ խօսք կուտայ որ Օրմանեան Պատրիարքին, Յարութիւն փաշային և յեղափոխականներու ներկայացուցիչներուն հետ պիտի խորհարակցի ու իրենց միաձայնութիւնով զած բարենորոգումներն ծրագիր մը, մէկ րոպէ չ'անցած, պիտի սկսի գործադրել:

Չայեան էֆէնտին պիտի երթայ ըսէ թօմիթէներուն թէ, Սուլթանը եւ կառավարութիւնը ո'չ եւրոպական Տէրութիւններու ապագայ փոճ ըսպանուիլը քննարկէ և ո'չ ալ յեղափոխականներու ուժերէն վախճանուն համար է որ որ կ'ընեն այս առաջարկութիւնը, այլ իրենք ինկատի ունին Հայերու շահերը և Օսմ. երկիրներու բարեբերը. իրենք ալ համոզուած են թէ ներկայ վիճակը շատ անտանելի է, և պէտք է ժամ առաջ բարեւաւել ժողովուրդի կացութիւնը եւ երկրի վիճակը:

Էլիաս էֆէնտին առջի անգամ հրատարակու պէս ըսն մը ըրաւ, բայց վերջէն ուրիշ բարձրաստիճան Պալատական մը... Բարթոլոմէոս Եպիսկոպոսը, մասնաւոր ճաշկերոյթի մը հրաւիրուեցաւ Մամուլէ փաշային ներքին գործոց նախարար կողմէն. և հոն Եպիսկոպոսը խօստացաւ Փաշային որ Էլիաս էֆէնտին ընդունիլ պիտի տայ պատգամաւորական պաշտօնը, և ըրաւ:

Եպիսկոպոսը Չայեան էֆէնտին տունը գնաց. էֆէնտին ալ ելալով քարտուղարին նամակ մը գրեց ու ընդունեց այս նոր պաշտօնը:

Ամեն մարդ կը հաւատար թէ նոր պատգամաւորը մէկ-երկու օրէն պիտի մեկնէր Եւրոպայ, բայց Դրան ալ աւելի հաւատարիմ Հայ ծառան՝ Տատեան փաշան հրապարակ եկաւ, ու կը ջանայ համոզել Սուլթանը թէ Էլիաս էֆէնտին բոլորովին անյար-

մար է այս փափուկ պաշտօնին, որովհետեւ անիկայ Հին մարդ է, նուրբ քաղաքական խաղերու անտեղեակ է. յեղափոխական երիտասարդներու հետ գործ ունենալու համար բոլորովին տարբեր մարդ պէտք է. Փաշան իւր քրոջ որդին ամենայնաւոր սեպեց այս պաշտօնին, մասնաւոր որ անիկայ այժմ արդէն Եւրոպայ է:

Առ այժմ կ'սպասուի Պալատին և Փաշային մէջ վերջնական համաձայնութեան մը:

Պատրիարքին՝ Սուլթանին մատուցած համաբաւար խնդիրները մէկիկ մէկիկ սկսան գործադրուիլ... Իֆթարի մը ճոխ և գլխիչ ճաշկերոյթի մը միջոցին, Պալատի Ա. Բարտուղարը հաղորդեց Պատրիարքին Սուլթանական հրաման մը, որով վերջնականապէս կը պահանջուէր Պատրիարքէն բեկանել Ալէքսանդր Սրբազանի ընտրութիւնը իւր կիլիկիոյ կաթողիկոս: Փաշան Պատրիարքին անփառութիւնը զգուցելու համար, ըսած է թէ՛ Սուլթանը նոր կաթողիկոսի ընտրութիւնը կը յանձնէ Պատրիարքի կամքին, որ իւր «յարմար դատած» Եպիսկոպոսը ընտրէ կիլիկիոյ Աթոռը բազմելու համար:

Այլընտանի յաջորդը պատուոյ խօսք տուաւ Պալատականին հրամանի անմիջական գործադրութեան համար, ու յաջորդող խառն ժողովին մէջ չեղեալ հրատարակել Ալէքսանդր Սրբազանի ընտրութիւնը ու նոր ընտրութիւնը կատարելու կարգադրութիւնը ընկու պաշտօնն ալ տուաւ երուսաղէմի լուսարարապետ Սապայեան Եպիսկոպոսին, որն ծանօթ է ամեն բանէ առաջ, իւր անյազ դրամաւարութեամբը՝ ամբողջ Եպիսկոպոսներու բանակին մէջ:

Բարի բերանները կը պնդեն թէ Օրման. պատրիարքը այնքան պախարակելի չէ, որքան Բարթոլոմէոս Եպիսկոպոս էֆէնտին, որն, կ'ըսեն զրամական պարզ և մը ստացած է ելալու ժողովուրդի և ժողովներու թուէով ընտրուած կաթողիկոսի ընտրութիւնը ոչնչացնելու համար: Ալէքսանդր Սրբազանին Յարութիւն Փաշան իմացուց այս որոշումը, որուն իզմիրլեանի ոգին ունեցող Սրբազանը հետեւեալ պատասխանը գրած է:

—Սիրելի ազգիս նուիրական եւ միահամուռ կամքով կաթողիկոս ընտրուած էի, երկու Եպիսկոպոսներ եւ մէկ-երկու ալ էֆէնտիններ, Սուլթանին հետ, զիս պաշտօնանկ ըրին: «Կամաց կամաց Այլընտանը և նուրեանը պիտի փնտռենք...»:

ԱՐԱՄ

Ն Ա Ի Ա Յ Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր Այսօր գալիք Սթ. Փօլ — — — Սառութեամբ կ'ըլլայ Վաղը գալիք Իր Պալատիոյս — — — Հավրէն



ՇԱՐԿԱՆՔԻՐ ԲՆԱԳՆԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր, ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմէն: Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.

ՔԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԲԱՆԿԱՆՔԻՐ ԲՆԱԳՆԻՆ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԲԱՆԱՍՏԱՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ

Table with 2 columns: Item name and Price. Includes 'Տարեկան', 'Վեցամսեայ', 'Շուրջամսեայ' and their respective prices.

Մտար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝ To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՒՐ, ՇԱՐԿԱՆՔ, ՄԱՐՏ 26 1898.

Ս Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք

Հայաստանցիք իրենց տան ու ԴէՊի ԲԼՕՆՏԱՅԻ

Հայաստանցիք իրենց տան ու ԴէՊի ԲԼՕՆՏԱՅԻ հայրենի սեղանէն դժգոհ՝ նոր աշխարհի հարստութենէն շատ ցած, Ամերիկայ կը վազեն մեր արդէն բազմամարդ գաղթականութիւնն աւելի ստուարացնելու համար: Գաղթականներ կը հասնին ամեն օր՝ քանի մը տարիէն հարստանալու ու Հայրենիք վերագառնալու սնտոյ յոյսերով, բայց աւելորդ է ըսել թէ հետեւութիւնն այս ամենուն լոկ յուսախաբութիւն եղած է ցայսօր, և պիտի ըլլայ ապագային: Դեռ այս կործանիչ հոսանքն չի դադարած, մի ուրիշ նոր վտանգ ալ կ'ուզայ սպառնալ Հայ գաղթականութեան կենսութիւն: Ամերիկայի Հայը, յուսախաբ և դժգոհ իր ներկայ վիճակէն՝ ծայրագոյն Հիւսիսի ստուած Եօթօնը սկսած է երազել՝ գէթ անոր եղբերներէն առատ ոսկի հաւաքելու բռուն փախուցումով: Տենդը սկսած է: Բլոնտայք երթալու ընդհանուր փախաբ մը կայ Հայ գաղութներու մէջ. ուստի զնացած են արդէն, և ոմանք կը ջնան դրամ գոյացնել՝ մօտերս մեկնելու համար: Դէպի Բլոնտայք, այս է օրուան նորութիւնն ու աղաղակը Հայ գաղթականութեան մէջ: Դէպի Բլոնտայք, անոր արեւուն վրայ, ստուած հողերուն մէջ բաղդ փնտռելու համար: Բայց ո՞ր բարով, խեղճ ու անփորձ բաղդախնդիր, կը ճանչնան երկիրը, ունի՞ս տուած դրամ. կրնա՞ն տոկալ անպատմելի դժուարութեանց, ո՞ր է հմտութիւնն ունին՝ այն դործին վրայ, որով կը յուսաս հարստանալ (կարճ ժամանակի մէջ): Արդարեւ ոսկուով խոռն են Ալաբամայի հողերը: Հատեր բաղդ շինեցին հոն, բայց շատ, շատ շատեր ինկան ճամբուն վրայ անկենդան, և կամ վերադարձան առանց իսկ այդ «Աւետեաց» ցուրտ ու սառած երկիրը կրնալ հասնելու: Եօթօնը անյիշատակ ժամանակներէ հետէ անբա ոսկի բերած ամբարած է Ալաբամայի հողերու մէջ, բայց բընութիւնը ստակալի պահպաններով չըջապատած է այդ հարստութիւն, որոց շատ քիչեր միայն կրցած են ու պիտի կրնան յաղթել: Ձիւնը, ցուրտը, սառն և ուրիշ անթիւ դժուարութիւններ պատրաստ կեցած են հոն բաղդախնդիր ճամբուն վրայ՝ զայն պատժելու համար: Աղէկ կազմուածք առատ դրամ ու գործին հմտութիւնն ունեցող մարդիկ միայն կրնան մաքառուլ այդ սոսկալի դժուարութեանց դէմ:

Հայ մարդը ընդհանրապէս յարմարութիւն չունի այս դժուարին փորձը փորձելու համար: Մեր մէջ չենք կարծեր թէ կան մարդիկ որ ամեն յարմարութիւն ունենան այդ արեւածալից ձեռնարկին: Ձիւնի թանձր ծածկոցին տակ ստուած ընդարձակ դաշտերու և լեռներու մէջ ոսկիխառն հող փնտռելն ու զայն գործելը Հայաստանի մէջ երկիր հերկելու չի նմանիր: Մենք Հիւսիսի այդ սոսկալի օդին վրայ գաղափար չենք կարող կազմել, բայց մեր գիտցած ցուրտին ո՞ր Հայ կրնայ, բնականութեան հետ, բաց օդին մէջ, ձիւնին ու սառնին հետ գործ ունենալ. գործ մը, որոյ վերայ դաղափար ու հմտութիւն չունի: . . .

Այսպիսի մահաբեր փորձ մը փորձելէ առաջ կոչում կ'ընենք մեր Հայրենակցաց լուրջ կերպով խորհիլ, ու դժուարութիւններն կըռն խոհեմութեամբ՝ նորանոր վտանգներու մէջ իյնալէ առաջ: Հաշուի առնելու է պէտք եղած դրամն, որ ինքնին բաւական է Հայ բաղդախնդիրը ոտքի կեցնելու համար. գիտնալու է թէ անկախ ու ազատ ամեն գործ ինքնին Բլոնտայք մ'է իր մէջ: Եւ ի՞նչ կ'արժէ եթէ մարդ աշխարհի ոսկին իւրացնէ, ու իր կենքն զոհ տայ Հիւսիսի հովերուն:

Մեր կարծեօք այս Բլոնտայքի տենդէն բռնուող մեր Հայրենակցաց համար լաւագոյն Բլոնտայք մը կայ իրենց Հայրենիքի մէջ, ուր սիրելիք իրենց կ'սպասեն անհամբեր. հոն, մեր Հայրենի հողին մէջ առատ ոսկի կայ պահուած աշխատող մարդուն համար:

Փոխանակ Ալաբամայ երթալու, փոխանակ բոլոր դրամդ ու կենքդ անձանթ ու անհաւանական փորձի մը վտանգներուն ենթարկելու, Հայրենիք վերադարձիր, ո՞վ մարդ, հոն է քու Եօթօնը, Տիգրիսի ու Եփրատի ափերուն վրայ. հոն պիտի գտնես ոսկիի լաւագոյն հանքերն, զորս կ'երազես գտնել Սառուցեալ Ովկիանի մօտեր՝ Հիւսիսային բեւեռէն ասդին. Է. Հ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

Հայկական Միութեան խնդիրն քննելու է տակաւին: Անցեալներն ոմանք շարժեցին մի քիչ, բայց խաբուսիկ երևոյթ մ'էր այն: Այսքան տարօրինակ բան շատ քիչ անգամ տեսնուած է մեր մէջ: Եթէ կազմակերպուելու փախաբ չըկայ, ինչո՞ւ անոր գոյքերն դրամի չի վերածուի ու Ս. Փրկչի Հիւանդանոցի վարչութեան ղրկուի՝ ծրագրի տրամադրութեան համեմատ:

Ս. Փրկչի հովանիին տակ շատ մը որբեր կան այժմ պատսպարուած, գէթ անոնց սիրոյն համար վերջ մը տալու է այս խնդրոյն: Տքթ. Այվազեանի քով աւանդ դըրուած Այվազովիկի պատկերը, որ ծուխի ու մուխի տակ Ռաֆայէլի նկարներուն գոյնը սկսած է առնել, ժամանակ է որ ծախուի ու արդիւնքը Պօլիս ղրկուի: Այս պատկերին Տ. Ալէքոն \$200 գին տուաւ անգամ մը Միութեան ժողովին մէջ, և այս ամենէն վար գին մ'է: Այս դրամով 8 որբեր կարելի է պահել Հայկական Միութեան անուամբ: Եթէ ուրիշ բան մը չենք կրնար ընել, որբեր պահենք:

ՏԵՌՔԻՆՅՈՐ ՇԵՅԻՔ

Ո՛չ 19րդ դարու Արքեմիտաները և ո՛չ ալ իրենց գիտական հրաշալի գիւտերը կը յուզեն ու կը յափշտակեն ներկայ սերունդը. հեռագրի, հեռաձայնի, ծայնագրի, էքս-միչի, «էլէկտրիկներուն» ալ վարժուած է դարձաւոր ժողովուրդը: Ապագայ Արքեմիտաներ եթէ կ'ուզէ գիւտերու հրաշքներու ընտանեցած սերունդը ապացնել ու դժուարել, պէտք է մեծ «էլէկտրիկ», «կենսաբ գտնային» աղաղակէ:

«Կ'ստեղծեմ» միայն պիտի յուզէ ապագայ սերունդը: Եւ ասոր համար է որ, արտակարգ իրարանցումներով, անպատու հիպոտեմներով չը յափշտակուեցանք երբ Վիէնայի նշանաւոր Տքթ. Շէյնքը յայտարարեց թէ՛ ալ ասկից վերջ անիմանալի կանխակարգադրութեամբ մը չէ որ յլի մայրը պիտի ծնի աղջիկ մը և կամ տղայ մը, այլ մօր «քէֆ»ն է կամքէն կախում պիտի ունենայ ծննդաբերութեան 2-3 ամիս առաջ ըսելու իւր տան բժշկին թէ աղւորիկ աղջիկիկ մը թէ՛ կուտու կը տղու մը մայրը կուզէ ըլլալ, և այս կենսական որոշումէն վերջ մայրն պէտք է ըլլորովին յանձնէ ինքզինքն բժշկի խնամքին ու գործարքէն անոր հրահանգները: Բժիշկը մասնաւորապէս պէտք է հսկէ Տիկնոջ ջերմութեան աստիճաններուն վրայ, և պէտք է խիստ կերպով որոշէ անոր կերած կերակուրները. որովհետև ծնելիք մանուկի սեռը բացարձակապէս կախում ունի մօր կերած կերակուրներու տեսակէն. զօրաւոր, զբաղող կերակուրները տղայ մը, իսկ անօր փափուկ կերակուրներն աղջիկի մը կը կարգին մօր արգասիքին մէջ:

Վիէնայի Տօքթ. Շէյնքը, փորձելու համար իր գիւտը, պէտք ունէր. . . հարուստ մօր մը որ մանրակրկիտ հետեւէր սեռափոխ բժշկի պատուէրներուն և փորձը կատարէր իր վրայ: Այդ մայրն ալ Լօնտոնը նուիրեց բժշկին: Յիլի կոմսուհի մը խորհրդակցեցաւ իր փոքրիկ հետ ու որոշեցին որ փոքր կոմսի մի ծնողքն ըլլալ կը փափաքէին քան կոմսուհիի մը: Ծար՞ն: Միակ ճարն էր Վիէնայէն կանչել Տքթ. Շէյնքը. հրահանգն ընդհանրապէս բժշկին, որ Լօնտոն փութաց և կոմսուհին քննելով՝ յայտնեց թէ սիրուն աղջկան մը մայրն պիտի ըլլայ 2 ամիսէն:

- Աման, Տքթ. չե՞ս կրնար այս ճակատագիրս փոխել. . .
- Ինչո՞ւ չէ, կոմսուհի, 2 ամիսէն կոմս տղայ մը կ'ունենաք, եթէ ինծի 500 ոսկի տաք:
- Սո՞քք ըլլայ, Տօքթ. Շէյնք, կըսէ կոմսուհին, միակ չեմ ուզեր «գժարող» սեռէս հատ մըն ալ աւելցնել աշխարհի վրայ:

Երկու ամիսուայ ժամանակամիջոցին մէջ կոմսուհին կը սնանի միայն այն կերակուրներով, զորս կը թողարկէ սեռափոխ բժշկին, և երկու ամիսը անցեալ շաբթու լրանալով՝ կոմսուհին իրաւ մայրը եղաւ փոքրիկ կոմսի մը: Եթէ Տքթ. Շէյնքի գիւտն վերջնականապէս հաստատուի, — կրնայ ըլլայ որ կոմսուհին Ամիէն տղայ պիտի ծնէր — այն ժամանակ ինչ ընելու ենք ձակատագրի և հոգիի անմահութեան յաւիտենական վարդապետութիւններն մինչև հիմայ ամեն մարդ կ'հաւատար թէ երկնքի շտեմարանն լեցուն էր տղու և աղջկայ անհամար հոգիներով՝ որոնք օր մը կարգաւ պիտի գան յարմար երկսեռ մարմիններու մէջ բնակելու: Բայց մի մարդ հրապարակ կուզայ՝ պնդելու թէ միայն կերակուրներէն կախում ունի սեռի կազմութիւնն: Եւ ներկայ սերունդն հանգարակի մտիկ կ'ընէ այս յայտարարութիւնն: Իրաւ որ գիտական հրաշքներու ալ վարժուած ենք: Գ. Թ.

ԱԶԳԻՐ

Վաղը սովորական եկեղեցիին մէջ, Ս. Պատարագէ վերջ պիտի խօսի Տ. Գ. Ձիթճեան, նիւթ սնենալով (Յիսուս): Ազատ Հարանին մէջ, Կիրակի երեկոյ ժամ 7ին, պիտի խօսին Տ. Ե. Թաւառնաւան, նիւթ ունենալով «Յաջողութեան Պայմանները», և Տ. Գ. Ձիթճեան նիւթ ունենալով «Մարդկութեան Ազատութիւնը»: 57 Ուէսթ, 25րդ փողոցի Հօլն:

Ո Ր Բ Ե Ր Ո Ւ Ս Ի Ի Ն Ա Կ Ը

Վախճան Հազար Հայ որբերուն չնչին օգնութիւն մը ընելու նախաձեռնութեան պատիւը նիւ Եօթօնի Հայոցս չ'է որ կը վերաբերի կարծեմ Ուսմբլի գործաւորները ամենէն առաջ պատառ մը չոր հացի և կտոր մը նոր լաթի գին ղրկեցին անոնց. եւ հետզհետէ նիւ ինկլէնտի միւս Հայ գործաւորները փութացին թէ՛ ընդհ. հանգանակութիւններով և թէ՛ եօթնեակի դրութիւնով, օգնելու որբերուն:

Տիկնոց Որբանոցում նորակազմ Ընկերութիւնը և Ազատ Հարանի վարչները հրապարակ եկած են այս շաբթու փրկելու համար նիւ Եօթօնի որբերու պատիւը: Երկու վարչութիւնները, սակայն, իրարմէ բոլորովին անտեղեակ, անցեալ շաբթու որոշած են փառաւոր հանդէս մը տալ ի նպաստ որբերուն, և զուգարդիպութիւնով մը այս երկու վարչութիւնները Ապրիլ 16ը նշանակած են հանդիսին օրը:

Շատ աւելորդ է ըսել թէ, ո՛չ թէ մէկ օրուայ մէջ, այլ շաբաթներ վերջ ալ, միևնոյն նպատակին համար տըրուած երկու հանդէսներ չեն կարող գահացուցիչ արդիւնք մը արտադրել:

Այս պարագային, շատ պարզ է, Որբանոցում Տիկնոցն ու Հարանի վարչները պարտքն է որ անմիջապէս իրարու հետ խորհրդակցին և որոշեն որ Ապրիլ 16ին միասին տան հանդէսը:

Հանդէսէն գոյացած դրամական արդիւնքի բաժանումն ալ շատ սիրուն կերպով կ'ըլլայ. անոր ճիշդ կէտը Տիկնոցն կ'ուսնեն կը ղրկեն Պատրիարքարան, որը աղջիկներու համար. իսկ միւս կէտն ալ Հարանի վարչները միևնոյն տեղը կը ղրկեն, որը տղաքներու համար:

Եւ օր մը, Հայաստանի որբանոցներէն մէկուն անկիւնը, քոյր ու եղբայր երկու որբեր իրարու պիտի ըսեն — այս նոր նախընտրանքն է հեռու աշխարհի քոյրերու ղրկեցին ինձ — ինծի ալ այս կարմրուուն համանին ճամբած են աղբարներս, քոյրիկ: Թ. Գ.

Ուսմբլը, Մարտ 23.

Ուսմբլի նորակազմ Գերասանական խումբը, որ անցեալները գիւղեցիկ և յաջող կերպով ներկայացուցանեցին իրաւ թագաւորի ողբերգութիւնը, ժողովրդեան յատուկ խնդրանք, որոշած է միևնոյն դեր ներկայացնել յառաջիկայ Շաբաթ երեկոյ Ս. Փրկչի ժողովարահին մէջ, ինչպատ որբերուն: Տոմարակները խիստ ատան են, 10 սէնթ: Ահա կրկնակ միջոց բարեգործութեան, 10 սէնթով թէ՛ որբերուն օգնել և թէ՛ դերասանական խումբը քաջալերել:

Պատ. Ու. Պէնէնեանի նախաձեռնութեամբ մեծ նուագահանդէս մը պիտի տրուի Ապրիլի վերջերս նախա Ուսմբլի «Ջանից Ընկերութեան», որոյ նպատակը թէ և ընդհ. երիտասարդաց զարգացումն է, սակայն նուագահանդիսի արդիւնքը — ինչպէս յայտարարեց Պատուէրին — պիտի յատկացուի որբերուն: Փափաքելի է գիտնալ թէ դրամը Պատրիարքարանին թէ Միսիոնարաց միջոցաւ պիտի ղրկուի: Ներկի վարժեմ դիտել թէ Միսիոնարաց շատ մը ուրիշ միջոցներ ունին որբերուն օգնելու համար: Հայոց լուսման «եր միջոցով ղրկենք: Բաղձալի է որ հրապարակաւ բացատրութիւն տրուի այս մասին:

—Սէնթրըլ Ծօլտի մէջ Տ. Վարդի- նակ վարդապետի նախաձեռնու- թեամբ եօթնեակ մը կազմուած է՝ վարագայ Որբանոցին մէջ որբ մը խնամելու համար։ Ն. Արժանապատ- ուութիւնը եօթնեակին մէկ անդամն է։

—Փրօվիտէնսի Հայոց ճաշարան- ներուն մէջ Տ. Վարդիակ վ. գան- ձանակներ պիտի հաստատէ, ի նպաստ որբերուն։ Նոյն քաղաքին մէջ ա- ռաջնորդի նախաձեռնութեամբ կազ- մուած որբախնամ ընկերութիւնը 40ի չափ անդամներ ունեցած է։ Ընկերու- թեան նպատակն է ամեն անգամ որ §50 եկամուտ մը ապահովէ, 2 որբ սկսի պահել Ազգ. որբանոցի մը մէջ։ Այս ընկերութեան անդամակցութեան պայմանն է՝ իբր մուտք վճարել առ- նուազն 25 սէնթ, և շարաքական առ- նուազն 5 սէնթ։

—Պարբերի կեդրոնական վար- ժարանի Ընկերութեան Փրօվիտէնսի ճիւղէն §76, և Սէնթրըլ Ծօլտի Սոր- Սոր գիւղի ընկերութեան կողմէն §40-50 զրկուած է Ուոլէ վանքի Ազգ. Որբանոցին։

ԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆ

Անցեալ կիրակի երեկոյին Ս. Փրօ- կիչ եկեղեցւոյ ազգային լսարանը նմանը չը տեսնուած երկսեռ բազ- մութեամբ լեցուած էր։ Աթոռ պակ- սեցաւ։ Ազգ. Ուսումնական խոր- հուրը յատկապէս Փրօվիտէնսէն հը- րաւիրած էր Տիկին Սարկաւազեանը. ահա այս նորութիւնն էր որ այդքան բազմութիւնը լսարան բերաւ։ Կե- րևի թէ Ազգ. Ուսումնական խոր- հուրը Աւստրիոյ ժողովրդեան տկար կողմը սկսած է տեսնել և ամեն ա- տեն ջանք չը խնայեր նորութիւններ մատակարարել։ Աչքի կը զարնէին մանաւանդ 50է աւելի տիկիներն ու օրիորդներն։

Տիկին Սարկաւազեան պատրաս- տած էր երկար ճառ մը, զոր կար- դաց Հայուհի մը կորովալից, քնքոյշ, քաղցրիկ և յուզեալ շեշտերով, նը- կարագրելով Հայաստանի թշուառա- գոյն վիճակը, կոտորածները, բռնա- բարուները, և ՅՈՅՍԻ լոյս մը դուրս պոռթկացուց արտասուակից բազմու- թեան վրայ և խնց անոնց բուռն և երկարաեռ ծափահարութիւնները։ Նախագահ Տ. Մաշոց վարդա- պետէ սկսեալ ամեն ոք փութաց ը- նորհակալութեան ձեռք սմմել այդ եռանդուն Տիկինը, որ յանդգնած էր այս յուսահատութեան և անտարբե- թութեան հոսանքին առջև՝ յուսոյ հզօր թուճ մը կանգնեցնելու փոր- ձը ընել իր փափուկ գրեթէ և լեզ- ուով։

ԲԱՆԱՍՏԵՂՍԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

Լ. Ի Մ Ս Ի Ր Ա Մ Ս ԱԶՍՏՈՒԹԻՒՆ, ՀԱՒԱՍՏՐՈՒԹԻՒՆ, ԵՂԵԱՅՐՈՒԹԻՒՆ Իմ սիրածս է Վատ բռնութեան անարգ ձեռքի Չարչարանքներ ալ դարձած, Ազատութեան վսեմ շունչով Ամեն կապանք ալ թօթափուած։ Իմ սիրածս է Սուրբ օրէնք հաւասարութեան Ամեն ուրեք թազաւորած. Ստրուկ, ազատ, գերի, իշխան Բոլորովին ալ վերցուած։ Եղբայրութեան ձեռք կարկառել Դէպի ամեն մարդ արարած, Մարդը իբրև ընկեր սիրել, Վեր վերցնել ամեն ինկած։ Ազգեր ձգած ամեն կուր, Մարդկութեան վեհ զաղափարով Մէկ դրօշի տակ միացած Ճշմարտութեան սուրբ հաւատքով, Իմ սիրածս է այն, Իտէսալ է այն, Զ. Պ. ՄԻՆՆԱՆ

ՄԻՆՆԱՆ ԵՐՔ ՍՊԱՍԵԼ Մեր համբերութիւնը հատու, ատու է ժողովուրդը։ Բարեգործա- կան Ընկերութեան միտքը յղացողնե- րի առաջին նպատակն էր օր առաջ հաստատել Բիւրօ և մի ընդունակ պաշտօնեայ ունենալ, որ անգործնե- րին գործ գտնելով՝ մի քիչ մեղմա- ցւէր նորանց օրն օրի վերայ դէպի կործանում առաջնորդող թշուառու- թիւնը։ Այն օրից անցել է հինգ ամիս. փայլուն յոյսերով ողևորուած և ողև- ւորող վարչութիւնը, կարծես, չգի- տենք կամայ... Թէ ահամայ, ինք- ղինքը դատապարտել է անգործու- նէութեան, յուսահատութեան դա- տապարտելով թշուառներն։

Ո՛ր մնաց, հարցնում են, Ատե- նապետի հրապարակային խոստումը, որ խորխորով յայտարարում էր, «Մենք խոստանում ենք 2 շաբաթից հաստատել Բիւրօ և մի պաշտօնեայ, այս է մեր առաջին գործը»։ Ատենա- պետի հանդիսաւոր խոստումից ի վեր անցել են հինգ հանդիսաւոր ամիսներ և դեռ խոստումը մնում է խոստում՝ թագնւած իր փառաւոր պատմուճա- նին տակ։

Դիւանի երկու անդամների պա- կասութիւնը մտատանջութեան մէջ էր ձգել Յար. Ատենապետին, նա շատ աշխատում էր այդ անդաման պա- կասը լցնելու համար. սակայն որն էր անհրաժեշտը. հայգանակութիւ- նից յետոյ Բիւրօն և պաշտօնեան հա- տատել, որոնց այնքան պէտք ունին մեր անգործ թշուառները, թէ Դի- ւանի անդամները ամբողջացնել... բայց չէ՞ որ սրանք Ատենապետի գիտ- նալու բաներն են...

Ինչպէս ատու են, «կուշտը սովա- ծին մանր կ'ըրբի», բայց մինչև ե՛րբ, յուզած ժողովուրդը համբերու- թիւնը կարած՝ ամեն օր հարցնում է, «ու՛ր մնաց վերջերս ձեր ընտրած պաշտօնեան», և եթէ իր այս կարե-ւոր հարցին պատասխանեք՝ ՄԻ ԲԻՉ Է՛՛ ԼԱՄԲԵՐԻՒՄ, նոյն յուզումը վեր- ջապէս պիտի փոխուի զայրոյթի...։

Մինչև ե՛րբ սպասել։ Բար. Ընկ. Դիւանի Անդամ Զ. ԱՐՁՈՒՄԱՆԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Նիւ Եօրթէն Եփրատի թղթակի- ցը, առածին համաձայն, իր «կէս- գիտուն արհամարհում» ոճովը, զա-ւէշտի յաւակնտութեամբ, միշտ հրապարակ կը նետուի կը նետուի ի սեղաթ իւր ու մն իր ու վարուածել ամէն գործիչ ու գործ և մէջ տե- ղը (ինքն իր վրայ հիացած) կը թո- ղու իր «տարագր-նկարագրի» իւր թը- տաւոր ու բարոյակա՞ն խեղութիւն- ները։ Այս հիանալի նկարագրերը (?), իւր Մշակէն գողցած «էլի կղերը» և «երջանիկ Նիւ Եօրթէնի» յօդուած- ներուն մէջ ինքզինքը բոլորովին ար- ժանի կ'ընէ մեր վերի խօսքերուն։

Թող ընթերցողը դատէ։ Ինչպէս բոլոր Նիւ Եօրթի Հա- յութիւնը ամբողջապէս այնքան սը- նամիտ կ'ըլլայ, որ կոյր գործիք կը դառնայ, իր խօսքով «սնանկամիտ, տգէտ ու անկարող ահրաժեհի մը», և անոր էնթրիքներովը կ'ընտրէ Հո- զարարձութիւն մը նոյնպէս «բոլոր- ըրովին տգէտ ու անկարող անձերէ»։ Ինչպէս իւր կեանքովը և զաղա- փարներովը Ամերիկայի ամբողջ Հա- յութեան ծանօթ անձնաւորութիւն մը, կրնայ օր մը այդ թղթակցին խե- լապատակը փոխ առնել և խօսիլ «Հայ են միայն անոնք որ Լուսաւոր- չական են և բնա Հայ չեն անոնք, որք պահք կ'ուտեն»։

Մենք այս Պարոնին վրայ մեր դա- ղափարները ունենալով հանդերձ, չէինք կարծեր որ կաքաւի նման գը- լուխը ձիւնին մէջ խոթելով՝ հաւա-

տայ թէ այլևս որսորդը զինքը չի- կրնար տեսնել։ Գէթ, երբ կըսէ, «Նիւ- Եօրթի Բժիշկներու, մասնագէտներու, քարոզիչներու, խմբագիրներու և օրէնագէտներու թիւը 100 ից 1 պա- կաս է, բայց ես ստուգեցի որ 1 ից 100 պակաս է»։ Լաւ կըլլար աւելցնէր թէ, այդ մէկն ալ ինք է, և այն ա- տեն ճիշդ կըլլար իրեն հետ բացա- գանչել... Երջանիկ Նիւ Եօրթի- ներ...։ ԱՐՇԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՈՒՈՒՆ

Յունվ. 12, Բաքայի, Մասս. (Շարունակութիւն)

Այս հարցում մ'է որ ամեն Հա- յու սիրտ թունը հանելու է. ունի՞նք մեր մէջ ուշիմ երիտասարդներ որ կը պատրաստեն իրենք զիրենք Հայաս- տանի ապագայ երկրորդները, ման- կավարժները, մեքենագործները, օ- րէնագէտները, ելեքտրագէտները և դերասանները լինելու։

Արդարև որչա՞փ ողորմելի պիտի լինի Հայաստանի ազատութիւնը, երբ իր սրտակից զաւակներուն տեղ օ- տարները ձեռք առնեն երկրին ամ- բողջ զէնքը։

Ազատութիւն մի՛ կոչէք այն որ լոկ թրքի մտէն գերծ է։ Եւրոպայի Հայերուն վրայ միայն աղօտ գաղափար մ'ուենեալով, մի քանի խօսք ըսեմ Ամերիկայի Հայոցս համար։

Աննշան բացառութիւններէ զատ մեծամասնութիւնն իս գուրկ ենք ա- պագայի այդ նախապատրաստութեան եռանդէն. մեր մէջ տակաւին ար- թընցած չէ հետաքրքրութեան ու զիտողութեան ոգին, որ ազգի մը զարգացման գլխաւոր պայմաններէն մին է։ Այսօր մեր աչքին առջև գի- տութեան բազմազան հրաշալիքները կը տեսնեք ու գոնէ չենք հետաքր- քրուիք անոնց գաղտնիքը հասկը- նալու։ Զկա՛յ Հայ մը թերևս որ տե- սած չէ ելեքտրակալ կառքը, որ ելեր կը քայլէ ինքնին՝ առանց ձիւն և ա- ռանց շոգիի, սակայն ո՞վ կայ մեր մէջ որ անոր կատարեալ գաղտնիքը թափանցած է. գուցէ շատեր բան մը կը բացատրեն ու գիտնալ կը կար- ծեն, բայց շատ կասկածելի է որ լոկ աղօտ տեսութիւն մ'ուենին անոր մա- սին։ Գրեթէ ամեն վայրկեան շոգե- կառքը կը թռչի մեր աչքին առջևէն, անհամար մղոններ կտրելով, սակայն մենք չենք գիտեր թէ շոգին ի՞նչ կերպով այդ գլանները կը թաւալեց- նէ իւր հզօր ուժովը։ Գործարաննե- ռու մէջ ամեն օր երկու բնական ոյժ մեր քթին տակ են, շոգին ու ելեք- տրակալ լոյսը. թերևս եղած չէ մէ- կը որ անգամ մը հետաքրքրութե- նէ մղեալ ի՞նչ վար, արտադրիչ մե- քենաներուն քով, ու հասնիայ այդ զօրութիւնը, որ ամբողջ գործարա- նը կը կառավարէ։ Բոլոր տուներու մէջ ջուր և կազ կը տեսնեք, առանց գիտնալու թէ ինչպէս կը բաշխուին անոնք այնչափ կանոնաւորութեամբ։ Հոյակապ կամուրջներուն մեծ ապ- շուրթեամբ կը նայինք ու կը հիանանք. ինչո՞ւ մեր մէջ ձգտում մ'է չըլլայ անոնց խորը թափանցելու։ Բնական ոյժերը խաղալիք դարձուցեր են բո- լոր ազգերը և անոնց միջոցաւ այս քան հսկայ քայլեր կ'առնեն քաղա- քակրթութեան ուղիին մէջ, մենք միայն ապուրթեամբ կը նայինք ու վախ մը կ'զգանք անոնցմէ։ (Շարունակելի) Կ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ԱԶԳԻՆ

Անցեալ տարի Կ. Պոլսէն գաղ- թողներէն Սեբաստիայի Յովհաննէս Տօնիկեան անունով անձին (35 տա- րեկան), ուր ըլլալը ով որ գիտէ, թող բարեհաճի իմացնել Պ. Յակոբ Փիլիկեանին։ 44 Սիւրբ Սթ. Փօրթ- Լէնա Մի.

Բնիկ Բէսարկիցի Գարօ Գարօեան անձին տեղը կը խնդրուի, իմացնել իւր քեռիին՝ Մ. Թամաճեանի։ 163 Ուէսթըրն Ամբիւ, Պրայթն, Մէսս.

Մ Ա Ն Ր Ա Լ Ո Ւ Ր Բ

—Լօրէնսի Հայկական Գրադարա- նի վարչութիւնը պաշտօնական նա- մակաւ կը ծանուցանէ թէ նոյն ըն- կերութեան վերջի անդամական ժո- ղովոյն ներկայ գտնուած են ոչ թէ 28ը, որ մեծամասնութիւն մը չինե- րկայացներ, այլ 43 անդամներ։

—Ֆիլչպըրկի մէջ, կը յիշեն ըն- թերցողք թէ անցանքներ մի քանի երիտասարդներ թեւզթ խաղացած ըլլալու յանցանքով ձերբակալուած ու տուգանայ ենթարկուած էին։ Պ. Ս. Գ. մասնաւոր նամակաւ մը այդ խնդրոյն վրայ գրելով՝ կը ծանուցա- նէ թէ այդ Պարոններն՝ ո՛չ թէ գը- րամով, այլ պարզ թեւզթ կը խաղան եղեր շաբաթ գիշեր մը, բայց ժա- մը 12ը անցած լինելով, ձերբակալ- ուած էին՝ Կիրակիօրեայ օրինաց դէմ մեղանշած ըլլալուն համար։ Նամա- կագիրն կը վկայէ նաև թէ ձերբա- կալուող արոններն ամեն պարագա- յի մէջ իրենց ազգային պարտակա- նութիւններն կատարող անձինք ե- ղած են Ֆիլչպըրկի մէջ, հակառակ ա- սոնց մասին Տիգրիսի մէջ հրատա- րակուած լուրերուն։

—Մեր Ծօլ Ռիվըրի թղթակիցը կը գրէ մ'արտ 17 թուականաւ «գալ- թակալութեան քար եղած 400 տօլա- րը Հօմ Միշընէրի կողմէ ալ չ'տըր- ուին ծանուցանել էտքը, Փրօվի- տէնսի քարոզչութեան թիկնածունե- րէ մին այս քաղաքը կուգայ և տեղ-ւոյս Հայերէն մէկ քանիին կը համո- ղէ որ հանրագրով մը նոյն միտի- օնարութեան գիմեն ու գիւքը քարո- զիչ ուզեն»։

—Ծօլ Ռիվըրի պզտիկ գաղութը միշտ երախտագէտ մնալու է ձանսի և Պէյքըրի նման օրիորդներուն, ո- րոնք՝ հակառակ իրենց դէմ նիւթ- ուած ապերախտութեան, մինչև այ- սօր ձեռք տուած են ամեն ինկած Հայու և կ'աշխատին ամեն կարելի եղած միջոց գործածել, որպէս զի Հայ մը անգործ չի մնայ»։

—Փրօվիտէնսի Թանգարանի վար- չութեան տարեշրջանը լրացած ըլ- լալով՝ նոր ընտրութիւն եղաւ անց- եալ կիրակի օր, և հետեւեալ անձինք ընտրուեցան. Տիարք Պ. Արուսեան, Գ. Բարիշանեան, Կ. Բարոզամեան, Պ. Եաշճեան և Գ. Արզումանեան։ Այս թանգարանն որ Տնտեսական Մի- ութեան նախաձեռնութեամբ հաս- տատուած էր տարիներ առաջ, այժմ նոյն միութեան որոշմամբ Ազգ. Հո- զարարձութեան տրամադրութեան տակ դրուած է։

—Սէնթրըլ Ծօլտի Ազգ. Հոգա- բարձութեան թանգարանն ունի այ- ժմ 100ի չափ Հայերէն գրքեր, ու օրէ օր զարգանալու վրայ է։ Տեղւոյն Հայերն ամեն Կիրակի օրեր ի մի կը գումարուին մասնաւոր ժողովարա- հի մը մէջ, ուր երգեր կ'երգուին ու ատենախօսութիւններ կ'ըլլան։ Նոյն թանգարանի այժմեան թանգա- րանագետն է Ա. Պ. Եսայեան։ Հո- զարարձութեան Ատենապետն է Տ. Տէր Ստեփանեան, Ատենադպրն՝ Ա. Մ. Ռուբէնեան։

—Բանթըն (0) բնակող 5 Հայեր Ալաքա մեկնած են։

—Ուսթըր Տ. Մ. Նահիկեանի տա- նը մէջ շքեղ կերպով կատարուած են Տ. Կ. Փափազեանի ընդ օր. Պէսի Նահիկեանի և Տ. Գ. Մանուկեանի ընդ օր. Մարիամ Նահիկեանի նշա- նախօսութեան հանդէսները։ Օր. Բա- րակեան զաշնակի վրայ սքանչելի կարներ նուազած է, իսկ պատանի- ներն ալ 6 տղարի գումարով մը հան- գանակցին որբերուն համար։

—Յրէզնօն կը գրեն— Բաղաքս զգալի կերպով յառաջ կ'երթայ. շինութիւնները կը շատնան. գործերը կ'ընդարձակին. առևտուրի մէջ գըտնուող Հայերն ալ այս հոսանքին հետ յառաջ կ'երթան: Տիրաք Մեղզունեան, Կատիկեան, Անուշեան, Թորոսեան և Ասլանեան ընդարձակած են իրենց գործերը: Հիմայ ամենէն ճոխ գործ կ'ընեն Տիրաք Մ. Մարգարեան, Ս. Միքայելեան և Ս. Պակտոսեան Փըսիֆիք Բըմբընի անուան ներքև: Միւս կարգի գործ ընողներն ալ նմանապէս կ'ընդարձակեն գործերնին. ինչպէս են Տիրաք Միքայելեան, Ազատեան ընկերք, Մ. Մարգարեան, Քէշիչեան, ձիհանչազեան, Երուստիեան, Փափազեան, Նիկիեան և այլք: Տօթօր Պասեան՝ բժիշկ և դեղագործ, լաւ գործ կ'ընէ. իւր դուստրը, տաղանդաւոր նուագածու և երգիչ, վերջերս աւարտեց իւր ընթացքը, և այժմ հօրը քով է: Մի քանի անգամ նուագահանդէսներ կազմուեցան, ուր նա երգեց և շատ մեծ ընդունելութիւն գտաւ. նաև Սան Ֆրանչիսկօ գնաց ու հոն ալ մեծ ընդունելութիւն ու համբաւ ստացած է կ'ըստի:

«Հայ ատամնագործը լաւ գործ ունէր, բայց վկայագիր չ'ունենալուն համար պարտաւորած է դադարեցնել իւր գործը առայժմ»:

—Այժմ Յրէզնօյի մէջ կան 600ի մօտ Հայեր, ընդհանրապէս ընտանիքներու բաժնուած: 60 ընտանիք իրենց տուները ունին, և մէկ քանիներ մէկէն աւելի տուներ ունին ու վարձու տուած են: 22 ընտանիք կան որք տուն չունին:

—Յրէզնօ քաղաքը այժմ 15,000 բնակիչ ունի: Երբ առաջին Հայք Յըրէզնօյ եկաւ, 1882ին, քաղաքը միայն հազար բնակիչ ունէր:

Ն Ո Ր Ա Վ Է Պ

ՀԱՅ ՊԱՆԴՆՈՒՄ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

«ՊԻՏԻ ԶՂՋԱՍ»
(Շարունակութիւն)

Երկու օր վերջ ամեն բան պատրաստ էր. նոյն առաւօտ կարաւանը պիտի ելնէր: Նուրիսան, որ բաւական պաշարներ չ'ընած էր իր որդւոյն համար, արեւազայէն առաջ զարթեցուց Արուսթին, նոյնպէս և երախայներին, որ վերջին մը ևս տեսնեն Աբարին: Ազգականք ևս փութացած էին գալ ողջ երթ մտղթելու և տնեցիներին միտթարելու: Նուրիսան, նստեցուց նացա բոլորին սեղանին շուրջ և դառնալով Արուսթին ըսաւ.

—Արուսթ, սիրելիս, թերևս այս ինձ համար վերջինն ըլլայ որ կը սեղանակցիմ. քեզ գուցէ՞ անգամ մ'ալ այս բաղդաւորութիւնը պիտի չ'վայելմ. միայն քեզ այն ասեմ, իմ բոլոր աղանչանքը դրժեցիր, սակայն գէթ այս վերջինը մի մերժիր և մի մտնար: Երբ կը գնաս Ամերիկայ, ջանայ շուտ դառնալ. յիշէ՛ այս անմեղ մանկիկներին. յիշէ՛ ընտանիքիդ. յիշէ՛ նաև ծնողացդ գերեզմանները: Ահա այս է իմ պատուէրը և խնդիրքը:

Արուսթ ջանաց բացատրել թէ բընաւ պիտի չ'ուշանայ, և թէ պիտի աշխատի գիւղի բաղդաւորներէն աւելի երջանակացունել գիրենք(??):

Երբ ջորեպանը դուրսը Արուսթի պաշարը կը բնուցունէր, նա ներսը իւղաբերէն իւր վերջի համբոյրը կ'առնէր: Նուրիսան, մայրական սիրոյ բուռն զգացումէն ընկճուած, նուազեր ինկեր էր վերջապէս: Երախայները նկատելով տունի արտակարգ երեւոյթը բարձր ձայնիւ անտեղեակ կը ճչէին: Արուսթ ներկայ իրողութիւններէն բոլորովին այլալուծած, հազիւ ինքզինք տունէն դուրս նետեց, բայց ջորեպանի խոսքոս ձայնը ուշաբերեց իրեն, երբ ըսաւ, քալէ՛...:

Գիշերի անհրամուռն քամիները բոլորովին անհետացել էին. ովկիանը իր փրփրադէզ ալիքներ կատաղութենէն հոգնած, հօրիզոնէ հօրիզոն լուսութեան մէջ կը նրկէր:

Տեսարանը խիստ սիրուն էր և միօրինակ կապոյտ երկնքի տակ կը փայլէր Մօնթանայ նաւը՝ ովկիանի կապոյտ ջրերի վրայէն: Արևի առաջի ճառագայթների հետ, Մօնթանայի հիւրերը դուրս գալով սենեակներից կը դիտէին անոր գնացքը սրարչաւ: Վերջ՝ սարաւանդը մի քանի երիտասարդներ՝ ձեռքներն թուղթեր բռնած՝ կը փափայլին բերանուն մէջ լուսեայն: Ընկերներէն մին խզելով լուսութիւնը՝ դիտեց թէ բնա խելք մնացած չէ գլուխը. միւս մը յարեց որ կարողութիւն չ'կար վրան. ուրիշ մը կ'առարկէր որ բնաւ չէր յուսար թէ կարող պիտ' ըլլայ այդ լեզուն սորուի: Ասանցմէ աւելի խելացին դիմելով Արուսթի, ըսաւ.

—Կուտ մայրիք, Միստուր Արուսթ, հավոյ տուտու:

—Ի՞նչ քո, հայ իմ վարի կալըդ, հավոյ տուտու, պատասխանեց Արուսթ մի առանձին ինքնագոհութեամբ:

Երբ դեռ կը շարունակէին հետադարձ խոսքեր ուղղել, նախաճառի զանգաղը վարէն ճաշի հրաւիրեց գիրենք:

Այդ օրէն մի քանի օր վերջ Մօնթանայ ողջամբ ողջունեց Նիւ Եօքսի արիւրին: Բոլոր ճանապարհորդները գնացին իրենց տեղերը, իսկ Արուսթ և ընկերները չ'ունենալով մի որոշ հասցէ՝ մինչև երեկոյ շրջէ վերջ հազիւ կորողացան գտնել չայրենակցի մը բնակավայրը:

Արուսթ ուրախ էր, քանզի քերականի յատակը տակաւին Հաճի Պէկի տուած ոսկիներից մնացորդ կար: Որչափ դժբաղդ պիտ' ըլլայի, կ'ըսէր, եթէ վիճակուած չ'ըլլար ինձ գալ տեսնել անգամ մը այս փայլուն լոյսերով լուսաւորեալ քաղաքը, նախաճառի սա վիճակարի շէնքերը, և աւելին, այն հոյակապ շէնքը, որոյ համար ընկեր մը ըսած էր թէ, ահա այս է «Թէվաթրոն», որոյ մէջ աշխիւններ կը խաղան...:

Անցան հանգստութեան օրերը. այժմ պէտք էր գտնել մի գործ: Բաւական գործարաններու գիրենք, սակայն ձեռնուշայն ետ կը վերադառնար: Ամեն մի տեղէ տարբեր պատճառներ կը լսէր, բայց զլիսաւորը լեզու չ'իտանալէ էր:

Ի՞նչպէրը փոխուած էին բոլորովին: Նա շատոնց սկսած էր մտածել. նեղութիւնը և վիշտը տեղի տուին որ ատէ Ամերիկան, բայց աւաղ, շատ ուշ էր: Բարի բարեկամ մը գլխով Արուսթի, առաւօտ մը կանուխ տարաւ գիրենք նշանաւոր գործարանի մը բակը կեցուց խումբ մը անգործ դուրս գալով գործարանից՝ սկսաւ զննել մի առ մի այդ դժբաղդ մարդոց առողջական կազմը: Վար կը գնէր յաղթանգամներին և գօրաւորներին, իսկ կը մերժէր տրեկարներին: Արուսթ զգածեալ էր խորապէս, և դառն յառաջեց. յայնժամ մտաբերեց իւր մտադրութեան օրերը, որ երբ ոչխարներ և նոխազներ գնումներ կ'ընէր, թէ ի՞նչպէս քննելով կ'ընտրէր անոնց պարտաները և ճարպայինները, ու կը մորթէր. աւաղ այժմ մեզ այն անասունների կարգը կը դասեն կ'ըսէր: Արուսթ նիւար էր կազմութեամբ, հետևաբար խորհեցանք թէ չէր կարող զոհացում տալ խոտապահանք քննիչի պահանջներին. ուստի այդ նախատեսաց չ'ենթարկուելու համար, «գլուխ առնեմ դուրս գնամ» կ'ըսէր, երբ գործապետը իւր առջև կեցած կը դիտէր իրեն:


(Շարունակելի) Ա.Բ.Ա.Յ.ՎԱՍԻՆԱՅ



Գարնան համար մեր ստացած տեղական և Եւրոպական նոր ապրանքներն անկարելի է գնի մասին մըրցման ենթարկել ուրիշներու հետ: Մեր երկար փորձառութիւնն ու արհեստին մէջ ունեցած հմտութիւնն ապրանքներու տեսակին հետ միացած կ'երաշխաւորեն այնպիսի հագուստներ, որք չեն կրնար գերազանցուիլ: Փորձ մը բաւական է գրեզ համողելու համար:

Հայ յաճախորդներէն եղած շահու հարիւրին տասը պիտի յատկանայ Բարեգործական Ընկերութեան: Ուրիշներու երթալէ առաջ շահաւոր է նախ գիտնել մեզ:

Կը ծախենք նաև առաջին կարգի հեծելանիւններ, շափաւոր գնեցով:



Յ. Մ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ
Թիւ 628 3րդ. ԱՎԸՆԻԻ, ՆԻԻ ԵՕՐԲ

Հաստատեալ 1854



Յ Ա Կ Ո Ր Խ. Խ Է Բ Պ Է Կ Ե Ա Ն.
(Ներկայացուցիչ)
ՈՒՆԻՒՐՄ Պ. ԲԵՅՂՆԵՐ ԵՒ
Ե Ղ Բ Ա Ր Տ.
Վ Ա Տ Ա Ռ Ա Վ Ա Ն Բ
Գիրիի, Օղիի, ոգիից Ըմպիւնաց ևն.
Թիւ 202, 204 ԻՄԹ 29րդ Փողոց,
ՆԻԻ ԵՕՐԲ, Ն. Ե.

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ իւր վաճառած ըմպիւններն ոչ միայն փորձեալ և անխաղախ են, այլ և գերբաժնուողի են ամէն գասակարգի անձանց:

Այս վաճառատան մէջ կը ծախուին Եւրոպական, տեղական, Բալթիֆորներէի և տաճկական ամէն տեսակ ուրբի, օղի, գինի, շամբանիւս, մուսթիլեայ, դարձուր, պրոստի, ափսիսի և այլն, իրենց ամեն տեսակներովն:

Փափաքողաց գներու ցուցակը կը ղրկուի առանց ո՛ր է ծախի:

Յանձնարարութիւնը կը կատարուին ամենայն ճշգրտութեամբ ևս փութով: Բաղաքին մէջ ապրանքներն ձրի կը ղրկուին, իսկ քաղաքէ դուրս ղրկուածներուն ծախքը գնողներուն վրայ է:

Ըմպիւններ կը վաճառուին թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով: (Հօլլէ՛՛՛՛ անսրիթ էլ):

Մեր յաճախորդք երբ չի հաւանին իրենց դնած ըմպիւններուն, յանձն կատենք զայն փոխել, կ'ըսէ պակաս ու փոխուած չըլլան:

Ըմպիւններ կը վաճառուին շիշով, կայրով, տակաւով և յատուկ սնտուկներով որք կը պարունակեն 12 կամ 24 շիշեր:

Գիրիի յիշեալ հասցէին կամ
Յ. Մ. ԽԷՐՊԷԿԵԱՆ,
535 ՈՒԷՍԹ 57րդ Փողոց, Ն. Ե.

Հ Ի Ր Զ Օ Լ
ՄԱՋԻ ԳԵՂ

*** HIRSOLA ***

A HAIR FOOD
FEEDS, STRENGTHENS,
CLEANSES AND SOFTENS THE HAIR.
DESTROYS ALL DISEASES OF THE
SCALP AND REMOVES DANDRUFF.
IT NEVER FAILS!

Reason: It is not a mere mixture of oil and water, but a solution of ingredients of Oriental Herbs, which science has demonstrated to be safe, pure and beneficial.

MANUFACTURED BY
H. KOORIE & CO., New York.

Put a small quantity in the palm of hand and rub gently on scalp morning and evening.
FOR SALE AT ALL DRUGGISTS

Կը զօրացնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադարեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը:

Միանգամ փորձել բաւական է սաղեղին արժէքը դիտնալու համար, որ արեւելեան խոտերէ պատրաստուած է յոյժ հաճելի մի հոտով:

Կը ծախուի րոտր դեղագործներուն քով:

Գիրի 50 Մէնթ միայն:

Կարելի է ստանալ նաև Հայկական դեղարանէն — Ի թիւ 472 3րդ Ալիւի, Նիւ Եօքս:

Պ Ա Կ Ա Ս Մ Ը Մ Ե Ր Մ Է Ջ

Կենաց ապահովագրութեան ամենալուսաւոր Ընկերութիւն մը կը ներկայացնէ Աղք. Թ. Տարագճեան: Պայմանք դիւրամտաշելի են:

Լիուի բացատրութիւնը հաճութեամբ կը տրուին փափաքողաց: Հասցէ՝
77 Ուէսթ 11րդ փողոց, Նիւ ԵՕՐԲ


Ն Պ Ա Ր Ա Վ Ա Տ Ա Ռ
Յ . ԶԱՂՈՒՄ ԵՒ ՈՐԴԻԲ

Ն Ե Ր Ա Տ Ո Ղ Թ Բ Բ Ա Կ Ա Ն Ա Պ Բ Ա Ն Ա Յ

Պատիւ ունիմք ծանուցանել արգոյ Հայ հասարակութեան թէ վերոյիշեալ խանութի մէջ կը վաճառենք Շամու, Մըսըրի և Թուրքիոյ ամեն տեսակ ապրանքներ, զօրօրինակ պուշուոր, ծեծած, լոխում, հալիւս, իսկ-վէի տէյրման և ճէզվէ, ներկիլի, թէմպէթի, Հայոց ազգային հիւանդանոցի սիկարի թուղթ և ուրիշ շատ տեսակ նպարներ ու անուշեղէններ: որ չենք կրնար բոլորն ալ յիշել հոս: նաև ունինք ամեն տեսակ պահարեղէններ:

Որտա ժաման գները: Փորձեցէք:
ԶԱՂՈՒՄ ԵՒ ՈՐԴԻԲ
73, Ուաշինկթօն Փողոց.

Ա . Թ Օ Փ Ո Ւ Զ Ե Ա Ն
289 Իսթ, 26րդ Փողոց, Ն. Ե.
Կ Օ Շ Կ Ա Վ Ա Տ Ա Ռ ԵՒ Կ Օ Շ Կ Ա Վ Ա Ր



Ամառուայ ամեն տեսակ կօշիկներ (արանց, կանանց, տղայոց և աղջկանց) կը վաճառենք խիստ աման գներով:

Արանց կօշիկներ \$ 1.25 էն 5.00
Կանանց « 1.25 « 2.50
Տղայոց և Աղջկանց, 50 « 1.50

Նոր ապսպրուած կօշիկներ կը կարենք ձեւաւոր և վայելուչ կերպով, և կը նորոգենք ամեն կարգի կօշիկներ շատ աման գներով:

Ճ Ի Լ Ի Ը Ա Շ Ե Ն
Վ Ա Տ Ա Ռ Ա Կ Ա Ն

Միսխոտի, առաջնակարգ սիկարի և Սիկարէթներու
Թիւ 592 3րդ Ալիւի
Յիշեցէք ՏԻԳՐԻՍԸ երբ գնէք